

լիշեալ թարգմանութիւնը մենք գտնում ենք խիստ նպատակաւարմար և լանձնարարում ենք մեր ընթերցողներին։

Գիրքը թարգմանուած է թարգմանչին լատուկ մաքուր հայերէնով։

Ա.

Leopold Von Ranke's Bildungsjahre und Geschichtsauffassung. Von Dr. Wahan Nalbandian. Leipzig. B. G. Teubner, 1902. էջ VIII+103. գիրն է 3, 40 մարկ։

Գերմանական համալսարաններում ուսանողները գիտութիւնների տեսութիւնների հետ միասին՝ միջոց ունին նաև փորձնական պարապմունքներ ունենալու ուսուցչապետների ղեկավարութեամբ փորձնական պարապմունքներ ունին հէթ միայն դործնական գիտութիւնների ուսանողները—բժիշկները, քիմիկոսները և այլն—այլ նաև զուտ տեսական գիտութիւններ սովորողները, ինչպէս օրինակ պատմութեան, աշխարհագրութեան, փիլիսոփայութեան և այլն ունինդիրները։ Այդ փորձնական աշխատութիւնները տեղի են ունենում ալսպէս կոչուած «սեմինար»-ներում, ուր ուսանողները ուսուցչապետի խորհրդով դրաւոր աշխատութեանց նիւթեր են ընտրում, գիտնական մեթոդով մշակում և ապա կարդում «սեմինարի» նիստերում և քննադատութիւններ լսում նախ ուսանողների և ապա ուսուցչապետի կողմից։ Լալպցիգի համալսարանի պատմական «սեմինար»-ում մշակուած նիւթերից մէկն է ներկայացնում և պ. Վ. Նալբանդեանի վերոյիշեալ աշխատութիւնը՝ ուսուցչապետ Լամպրեխտի ղեկավարութեամբ։ Աշխատութեան նիւթն է աշխարհահռչակ պատմարան Լէօպոլդ Ռանքէի համառօտ կենսագրութիւնը և ալն խնդիրը՝ թէ ինչպէս է նա ըմբռնում պատմութիւնը *)։

*) Ռանքէն 83 տարեկան հասակում սկսեց իւր «գլուխ դործողը»—ընդհանուր կամ ինչպէս ինքն է կոչում «Աշխարհի» պատմութիւնը—Weltgeschichte—և ղեռ չվերջացրած, 91 տարեկան հասակում վախճանուեց 1886 թ.։ Մեզ ծանօթ է իսահակ Թարութիւնեանի լոզուածը Մոսկուայի «Հանդէս գրականական»-ում Ռանքէի ընդհանուր պատմութեան մասին, որից տաւջ են բերուած ալն բոլոր հատուածները, որոնք վերաբերում են հայերին։

Պ. Նալբանդեանի աշխատութիւնը մի բարեխիղճ ուսումնասիրութիւն է Ռանքէի պատմական գրուածքների և դրանց վերաբերեալ ալոց հեղինակութիւնների. պատմութիւն ուսումնասիրողները հաճութեամբ կկարդան ուսանողական այս գործը: Այս աշխատութիւն ևս — ուրիշ շատերի հետ — ապացոյց է, որ Գերմանիայի հալ ուսանողները հետաքրքրուում և պարապում են գիտութեամբ. սակայն այս առիթով մի երկու խօսք: Գիտութիւնն ընդհանուր է բոլոր ազգերի համար, բայց ամեն մի ազգի անհատներն էլ ուսումնասիրելով ընդհանուր գիտութիւններն՝ աշխատում են ուսումնասիրել նաև իրենց ազգայինը, որովհետև ալդ բնականաբար աւելի մօտ է իրենց սրտին, իրենք աւելի հմուտ են ալդ շրջանին, ուրեմն և աւելի ձեռնհաս: Ա՛րդ, հալ ուսանողը նույնպէս ուսումնասիրելով ընդհանուր գիտութիւնները և ծանօթանալով գիտնական աշխատութեան մեթօդին, ինչո՞ւ իւր ազգային պատմութիւնից և կեանքից չպէտք է վերցնէ և իւր գրական ուսումնասիրութեան նիւթը. միթէ հալոց պատմութեան նիւթը գիտութեան սեպհականութիւն չէ: Միթէ գերմանացիք կարիք ունին, որ հալ ուսանողը ցոյց տալ իրենց Ռանքէի նշանակութիւնը — հարկաւ ո՛չ: Սակայն մենք, հայերս, կարիք ունինք, որ հալ պատմաբան ուսանողը ուսումնասիրէ, պարզէ, լուսաբանէ և քննադատէ հալոց պատմութեան գոնէ նշանաւոր կէտերը, շրջանները՝ համաձայն գիտնական սկզբունքների: Վերջնիս համար հարկաւ աւելի շատ աշխատանք և ջանք պէտք է թափել, սակայն, որքան ճանաչում ենք, պ. Նալբանդեանը աշխատանքից փախչող երիտասարդ չէ:

ՈՐԻՉ

Բժ. Սիմէօն Շահնազարեանց. Հայ դպրոցի ցաւերից. I. Վարչականի շուրջը. էջ XIX+43. Մոսկուա 1890. տպ. Զ. Բարխուդարեանի:

Յարգելի բժ. Շահնազարեանը, որ երկու տարի տեսչի պաշտօն է վարել Նրեանի հալոց թիմական հոգևոր դպրոցում, մեծ եռանդով նուիրուել է մանկավարժական խնդիրներ լուծելուն և մեր թիմական դպրոցները կանոնաւորուած տեսնելու բաղձանքներ ունի: Այս հինգերորդ թէ վեցերորդ գիրքն